Սալվադոր Դալի

Նանե Պլուզյան և Մարի Հարությունյան

Նա ծնվել է 1904 թվականի մայիսի 11-ին Իսպանիայի Կատալոնիա նահանգի Ֆիգուերաս քաղաքում: Դեռ մանկուց Սալվադորը տարբերվում էր իր վարքով և բնավորությամբ: Իր առաջին նկարը նա նկարել է տասը տարեկան հասակում: 1921 թվականին ընդունվել է Սան Ֆեռնանդոյի գեղարվեստի թագավորական ակադեմիա: Նկարը, որ ներկայացրել էր ընդունվելու համար, չի ընդունվում փոքր լինելու պատճառով, բայց շատ բարձր է գնահատվում մասնագետների կողմից:

Եվ նրանք Դալիին տալիս են երեք օր նոր նկար ներկայացնելու համար, բայց Սալվադորը ներկայացնում է նախորդից ավելի փոքր նկար: Այդուհանդերձ, բացառության կարգով, բացառիկ վարպետության համար Սալվադորին ընդունում են ակադեմիա: Մադրիդում ուսանելը ազդում է նրա սկզբնական մասնագիտական ժամանակաշրջանում կատարած նկարների վրա, դրանք եղել են զուտ ակադեմիական ոճի մեջ: Այդ ժամանակահատվածում նա ծանոթանում է Ֆեդերիկո Գարսիա Լորկայի և Լուիս Բունյուելի հետ:

Նրա առաջին ցուցահանդեսը տեղի է ունեցել 1925 թվականի նոյեմբերին Բարսելոնա քաղաքում:

Դալիի թատրոն-թանգարան

Թանգարանում է գտնվում Դալիին դեռևս մանուկ հասակից հայտնի քաղաքի թատրոնը, որտեղ կայացել է երիտասարդ Դալիի առաջին հանրային ցուցահանդեսը: Իսպանիայի քաղաքացիական պատերազմի ժամանակ հին թատրոնն այրվել է և մնացել են միայն ավերակները: 1960 թվականին Դալին և Ֆիգերասի քաղաքապետ Ռամոն Գուարդոլեն որոշում են վերակառուցել թատրոնը որպես քաղաքի հայտնի որդուն նվիրված թանգարան:

1968 թվականին քաղաքային խորհուրդը հավանության է արժանացրել այդ նախագիծը, և հաջորդ տարի սկսվել է կառույցի շինարարությունը: Թանգարանի ճարտարապետներն են եղել Խոակիմ դե Ռոսը և Ռամիս ու Ալեքսանդր Բոնատեռաները:152: Թանգարանը բացվել է 1974 թվականի սեպտեմբերի 28-ին[2]:4[4] և ընդլայնվել է 1980-ական թվականների կեսերին: Թանգարանի կազմում ներառված են թատրոնի հին շենքին կից շինություններն ու բակերը: Թատրոնը վերանվանվել է Տոռե Գալատեա՝ ի հիշատակ Դալիի վաղամեռ կնոջ՝ Գալայի: Կառույցն աչքի է ընկնում կարմիր պատերի երկայնքով տեղակայված հսկա սպիտակ ձվերի շարքով:

Սալվադոր Դալիի և Արամ Խաչատրյանի հանդիպումը

Միխաիլ Վելլեր

Սալվադոր Դալիի և Արամ Խաչատրյանի հանդիպումը

Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը ցանկալի հյուր էր ոչ միայ Հայաստանում, Մոսկվայում,Լենինգրադում, այլև արտասահմանում, Ֆրանսիայում, Իսպանիայում: Մի անգամ Իսպանիայում հաջողությամբ ընթացող հյուրախաղերի ընթացքում կոմպոզիտորին հարցրին, թե ինչ կկամենար տեսնել Իսպանիայում: Սա էլ ցանկություն է հայտնում հանդիպելու 20-րդ դարիմեծագույն նկարիչ Սալվադոր Դալիի հետ: Այս հայտարարությունը ստիպեց կազմակերպիչներին տարակուսել, քանի որ իր էքսցենտրիզմով հայտնի Դալին կարող էր տհաճ անակնկալ մատուցել: Բայց Դալին հեռախոսով բարյացակամորեն լսեց հանդիպման ցանկության մասին և պատասխանեց, որ ինքը հանճարեղ կոմպոզիտորի երկրպագուն է և երջանիկ կլինի ցանկացած պահի ընդունել իր համեստ առանձնատանը: Վաղը՝ ցերեկվա ժամը 2-ին: Եթե, իհարկե, հանճարեղ կոմպոզիտոր Խաչատրյանը համաձայն է: Եվ հաջորդ օրը՝ ժամը երկուսից 3 րոպե պակաս, Խաչատրյանին, իմպրեսարիոյին, քարտուղարին և թարգմանչուհուն կառավարական լիմուզինը հասցրեց Դալիի ապարանք: Ներս ընդունեցին միայն Խաչատրյանին: Մնացածները տարակուսած բարձրացրեցին ուսերը, բայց չզարմացան, որովհետև դա Դալիի «ձեռագիրն» էր: Խաչատրյանին ուղեկցեցին պալատ: Արարողապետը հրավիրեց մի շքեղ ընդունարան և առաջարկեց նստել: Տեղեկացրեց, որ Դալին հիմա այդ դռնով ներս կմտնի:

Պատի հնագույն ժամացույցը ձայնեց երկու անգամ: Ժամը երկուսն էր: Խաչատրյանը նստեց ոսկեթել շքեղ բազմոցին: Նրա դեմ խճանկար սեղան էր՝ վրան հայկական կոնյակներ, իսպանական գինի, մրգեր և ծխախոտ: Իսկ սրահի մյուս անկյունում՝ ոսկյա մեծ վանդակի մեջ, քայլում էր ծիածանագույն փետուրներով սիրամարգը: Անցավ ժամանակ: Գիտենալով, որ Իսպանիայում ճշտապահությունն ընդունված չէ՝ նա սկսեց դիտել սենյակը, ուղղել փողկապը, հարդարել մազերը: Երկուսն անց 10 րոպեին ենթադրեց, որ Դալին ուր որ է կհայտնվի: Երկուսն անց 20 րոպեին մի փոքր անհանգստացավ: Մի կում կոնյակ խմեց: Երկուսն անց կես ևս մի կում կոնյակ խմեց ու մի բաժակ գինի, հետո խաղող պոկեց: Դեմքին անհանգստության նշաններ հայտնվեցին: Ի՜նչ անտաշություն: Սկսեց քայլել սենյակում: Նա փորձեց բացել այն դուռը, որտեղից պետք է հայտնվեր Դալին: Բայց դուռը կողպեքով փակ էր: Եվ Խաչատրյանը որոշեց՝ կսպասի մինչև երեքը և կգնա գրողի ծոցը: Ուղիղ 3-ին նա նյարդայնացած թքեց ծխախոտի մնացորդի վրա, մի թաս «Ախթամար» խմեց և հաստատակամ մոտեցավ դռանը: Բայց պարզվեց՝ այն դուռը, որտեղից ներս էր մտել, փակ է: Հերթականությամբ փորձեց բացել բոլոր դռները: Բոլորը փակ էին:

Կենտրոնանալու համար մի բաժակ կոնյակ էլ խմեց, բարձրաձայն հայհոյեց, թքեց սիրամարգի ուղղությամբ, քանդեց-հանեց փողկապն ու խծկեց գրպանը: Փնտրեց հեռախոս կամ զանգի կոճակ: Բայց՝ իզուր: Գուցե Դալիի հետ ինչ-որ բա՞ն է պատահել, գուցե նա դեռ չի վերադարձել Ամերիկայից: Արդեն ուտելու պահանջ զգաց: Արդեն ճաշելու ժամանակն էր: Ի դեպ, նա դիտավորյալ նախօրոք չճաշեց, որպեսզի Դալիի հետ ճաշի: Նորից նստեց սեղանի կողքին, մի տանձ ընտրեց, նարնջի հյութը կաթեցրեց վերնաշապիկին, մի հատ էլ կոնյակ գցեց: Սկսեց սրտնեղել: Երեք անց կեսին բնական պահանջ զգաց, բայց դռները փակ էին: Արդեն քաղաքավարության կանոնները հարգելու ժամանակը չէր: Նա բավարարեց բնական պահանջը պատուհանին դրված սկահակի մեջ: Ժամը ուղիղ 4-ին խլացուցիչ ձայնով, ինչ-որ տեղ թաքցված բարձրախոսից հնչեց «Սուսերով պարը»: Դուռն աղմուկով բացվեց, և հատակ մաքրելու երկարակոթ խոզանակը հեծած, բոլորովին մերկ, գլխավերևում սուսեր ճոճելով՝ ներս մտավ Սալվադոր Դալին: Նա սիգարշավեց ամբողջ սրահով մեկ և դիմացի հենց այդ պահին բացված դռնից դուրս թռավ: Դուռը փակվեց, ու երաժշտության ձայնը կտրվեց: Ներս մտավ արարողապետը և հայտարարեց, որ ընդունելությունն ավարտված է: Այս ամենից քար կտրած Խաչատրյանը ջղաձգորեն կարգի բերեց իրեն: Կոմպոզիտորին նստեցրին ավտոմեքենա և հյուրանոց հասցրեցին: